10 ՅՈՒՆՈՒԱՐ 1995 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 1 (755)

# Ազգ

Azg armenian daily

## Գազի ծավալները նվազել են, էլեկտրամատակարարումը մնացել է անփոփոխ

Հունվարի 15-ին ՀՀ կառավարությունում կքննարկվի մայրաքաղաքի այս տարվա բյուջեի հարցը եւ այդ առթիվ բոլոր համապատասխան ծառայությունները պետք է վերանայեն իրենց ծրագրերը: Հունվարի 9-ի Երեւանի քաղխորհրդի դիսպետչերական խորհրդակցության ժամանակ նշվել է, որ ներկայումս մայրաքաղաքում ջեռուցվող 1711 շենքերին մոտ օրերս Շենգավիթի շրջանում կավելանան մի քանիսը: Քաղխորհրդի նախագահ Վահագն Խաչատրյանը կարգադրել է արագացնել Բ 3 թաղամասի ջեռուցման աշխատանքները: Ըստ լրատվական կենտրոնի հաղորդման, հանրապետություն մուտք գործող գազի ճնշումը նվազել է, սակայն էներգամատակարարման 4 ժամյա գրաֆիկը մնում է ուժի մեջ:

## Մետրոպոլիտենի աշխատանքը ժամանակավոր խափանվեց

Հունվարի 9-ին ժամը 10.45-ին Երեւանի մետրոպոլիտենի աշխատանքը կանգ առավ 20 րոպեով: Գնացքների երթեւեկությունը դադարեցվել էր էլեկտրաէներգիայի մատակարարման խափանման պատճառով:

ԼՏ

## Դատավճիռը չի կարող կանխել դատը

*Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության հայտարարությունը*

Իր գոյության ավելի քան 100 ամյա պատմության ընթացքում Ռամկավար ազատական կուսակցությունը եղել եւ մնում է ազգային ազատագրական շարժման, Հայ դատի պաշտպանության, ազգային անկախ եւ ժողովրդավարական պետականության հաստատման եւ ամրապնդման պայքարի առաջամարտիկ: Հայաստանի անկախության հռչակումից հետո կուսակցությունը վերականգնեց իր գոյության իրավունքը Հայաստանում, ձեռնամուխ եղավ պետական եւ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ժողովրդավարության եւ ազատականության գաղափարների տարածման ու արմատավորման, արդարի, բարգավաճ եւ իրավական պետության ստեղծման գործին:

Հետեւաբար, Ռամկավար ազատական կուսակցությունը խստորեն դատապարտելի է համարում ոչ սահմանադրական, բռնի միջոցներով որեւէ խմբի կամ քաղաքական ուժի կողմից իշխանության տիրացումը, գաղտնի կառույցների ստեղծումը, շահատակությամբ եւ ահաբեկչությամբ [illegible]

## ՀՅԴ-ն որոշել է պայքարել օրենքի սահմաններում

*Պատգամավորական ժողովն այսօր կհրապարակի դատապարտող հայտարարություն*

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Երեկ ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեն հանդես է եկել հայտարարությամբ, ըստ որի ՀՀ օրենքների սահմաններում պայքարելու է կուսակցության օրինական իրավունքները վերականգնելու համար: [illegible]

Տես # էջ 2

■ Երեկ Գերագույն խորհրդի շենքում տեղի ունեցած պատգամավորական ժողովի ընթացքում քննարկվեց եւ ընդունվեց մի հայտարարություն. [illegible]

Տես # էջ 2

## Դաշնակցության դատը կսկսվի հունվարի 12-ին

Դաշնակցության դեմ հարուցված մեղադրանքների առթիվ դատը տեղի կունենա Հայաստանի Գերագույն դատարանում հունվարի 12-ին, ժամը 11-ին: Այս մասին հայտարարեցին ՀՅԴ ԿԿ անդամները երեկ կայացած մամուլի ասուլիսում միաժամանակ ընդգծելով, թե իրենց կարծիքով այսօր Հայաստանում դատական իշխանություն չկա, այդ համակարգում մարդկանց մեծ մասը դրածոներ են: [illegible]

## Թուրքիայի մասնակցությունը խաղաղարար ուժերին բացառվում է

Անցած շաբաթ Ստեփանակերտի [illegible]

## Դուդաեւը պատրաստվում է մեկնել Թուրքիա

Ստեփանակերտի լավատեղյակ աղբյուրների հաղորդման համաձայն, օրերս Չեչնիայից Ադրբեջան են հասցվել երեք տասնյակից ավելի սպանված ադրբեջանական կամավորներ, որոնք մասնակցել են ռուսական զորքերի դեմ մարտական գործողություններին: Նրանցից 13-ը Ադրբեջանի նախկին ներքին գործերի նախարար Իսկանդեր Համիդովին ենթակա «գորշ գայլեր» ազգայնականացված կազմակերպության զինծառայողներ էին: Նույն տվյալներով չեչեն ապստամբների ղեկավար Ջ. Դուդաեւը մոտ օրերս պատրաստվում է Ադրբեջանի տարածքով մեկնել Թուրքիա: Նույն աղբյուրի համաձայն, այդ նպատակով Բաքվի «Բինա» օդանավակայանում Ջ. Դուդաեւին եւ նրա մերձավոր բարեկամներին սպասում է թուրքական ռազմաօդային ուժերին պատկանող հատուկ ռազմական ինքնաթիռ:

## Այսօր Երեւանում հանրահավաք ի պաշտպանություն չեչենների

Այսօր ժամը 15-ին Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան առջեւ տեղի կունենա հանրահավաք ի պաշտպանություն չեչեն ժողովրդի: Հանրահավաքի նախաձեռնողը ԱԻՄ Ք կազմակերպությունն է, որի կարծիքով Չեչնիայում ոչ միայն ոտնահարվում են մարդու իրավունքները, այլեւ տեղի է ունենում չեչեն ժողովրդի ցեղասպանություն: ԱԻՄ Ք-ի տարածած հայտարարության մեջ ժողովրդավարական բոլոր ուժերին կոչ է արվում բողոքի ձայն բարձրացնել մի ամբողջ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման դեմ:

## Պայթուցիկ ռումբ հնչակյան ղեկավարի գրասենյակի առաջ

[illegible]

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ազգային

ՄԵՂԻՆԱԿԱՐԾ

## Հիսուն տարի եւ մեկ օր

Երեկ լրացավ Հայաստանի Նախագահի 50 տարին։ Դժվար թե իր որեւէ հոբելյան Լեւոն Տեր-Պետրոսյանը դիմավորեր այսման բարդ, հակասական մի ժամկում։ Մի կողմից խորհրդային կայսրության կաղապարներից ազատված ինքնուրույն Հայաստանը եւ հաղթողաբար մարտնչող Ղարաբաղը, մյուս կողմից բազմաթիվ խրթին հարցեր կապված տնտեսական ճգնաժամի, արտաքին չլուծված խնդիրների, ժողովրդի աղքատության, բարեկեցության, կրթության եւ զարգացման հետ։

Նախագահը եւ իր զինակիցները համեմատաբար առանց մեծ կորուստների կարողացան խորախորքերի առանց Հայաստանը դուրս բերել խորտակվող միութենական կայսրության փլատակների տակից եւ անվնաս Ղարաբաղը Ադրբեջանից, ինչպես խոստացել էին. սակայն Հայաստանում ծայր առած անօրինությունները, բռնությունները ու սովածությունները, կենցաղային հյուծիչ դժվարությունները ու անորոշ ապագան առօրյայում մթագնում են այդ ձեռքբերումները եւ հարուցում նրա հանդեպ քաղաքական ուժերի եւ ժողովրդի լայն շերտերի դժգոհությունը։

Նախագահը թերեւս է ընդդիմադիր ... [illegible]

է փոխում իր հիմնական թիմը։ Ղարաբաղյան շարժման սկզբից ի վեր նա անփոփոխ կերպով շրջապատված է նույն հավասարիմ մարդկանցով, որոնց վստահել է պետության ամենակարեւոր լծակները, երբ հաշվի յառնենք «Ղարաբաղ» կոմիտեի իր նախկին ընկերների մի մասի հեռանալը, որոնք լրացրին ընդդիմության մեջ անհնազանդականների շարքերը։ Չի ... [illegible]



[illegible]

### Արձագանքում են նախագահի ...

Սկիզբը էջ 2

[illegible]

ԳԵՏՐՈՅՑ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ ... [illegible]

ՍՓՅՈՒՌՔ

## Հայաստանն իր հոգսերով ու հույսերով

*Բանախոսություն դեսրոյտահայության համար*

[illegible]

ՄԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Փաքաքեն, ես գնում եմ այս... մանկատունը

[illegible]



[illegible]

digitised by A.R.A.R.@

ԱՇԽԱՐՀ

# Չինաստանը ԳԱՏՏ-ի դուռն է բախում



## Չինաստանին չի կարելի անտեսել

Ս. Օ.

# Իրանական ատոմային ռումբ առաջիկա 5 տարո՞ւմ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ՌԵՅՏԵՐ:

## Անգլիա. Բռնագրավվել է 8 մլն դոլարի թմրանյութ

ԼՈՆԴՈՆ, 9 ՅՈՒՆՎԱՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Բրիտանական ոստիկանությունը թմրանյութեր տեղափոխելու մեղադրանքով ձերբակալել է 4 բնակիչների: Օտարերկրացիների մոտ հայտնաբերվել է մեծ քանակությամբ հաշիշ եւ մարիխուանա: Բռնագրավված թմրանյութերի գնահատային արժեքը կազմում է մոտ 8 մլն. դոլար:

ՌԱԴԻՈ

# «Ամերիկայի ձայնը» նոր ուղիներ է փնտրում



Թարգմանեց
ՆՈՒՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԱՆԿԱՐԱ

# Քաղաքական գործիչների ռեյտինգը Թուրքիայում

Ա. Ռ.

ԳՈՒՅԺ

Լեւոն, Ռաֆայել, Եվենա Արզումանները հայտնում են ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԱԹՈՅԱՆԻ մահը: Թաղումը տեղի կունենա հունվարի 10-ին՝ Բաղրամյան 1-ին փակուղի, տուն N 7:

digitised by A.R.A.R.@

# Ազգ օրվա հեռագրով

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

## 1995 թ. կլինի՞ խաղաղության տարի

### Միակ մտահոգիչ հանգամանքը մնում է Ռուսիայի անկանխատեսելիությունը

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության գոտում արդեն ութ ամիս շարունակվող հրադադարը պահպանվելով նաեւ Ծննդյան տոներին, բնեն լուրջ մտավախություն կար, թե այդ օրերին ադրբեջանական բանակը կարող էր փորձել ռազմական գործողություններ Ղարաբաղի դեմ: Վերջին շրջանի հաղորդագրությունների համաձայն, Ադրբեջանը շարունակում էր կուտակումները ... [illegible]

[illegible]

Լեռնային Ղարաբաղը 1995 թվականը ... [illegible]

ՂԱՐԱԲԱՂ

## Սամվել Բաբայանը ԼՂՀ պաշտպանության նախարար

[illegible]

Հունվարի 9-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով ստեղծվել է ԼՂՀ պաշտպանության նախարարություն: Նույն օրը նախագահի հրամանագրով հանրապետության պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրել է ԼՂՀ պաշտպանության բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Սամվել Անդրանիկի Բաբայանը: ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը ծնվել է 1965 թվականի մարտի 5-ին, Ստեփանակերտում, ծառայել է խորհրդային բանակում, ազգային ազատագրական շարժման առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցել է հայրենիքի սահմանների պաշտպանությանը: Զորավարական փայլուն տաղանդի շնորհիվ վաշտի հրամանատարի ծառայությունից դարձել է ԼՂՀ պաշտպանության բանակի գլխավոր հրամանատար: Նորընտիր նախարարը անկուսակցական է: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

ՀԱՅԱՍՏԱՆ

## Իջեւան-Տավուշ ճանապարհի բացումը հունվարի 15-ին

[illegible] ... ճանապարհի բացումը նախատեսված է հունվարի 15-ին:

Յ. Ս.

ԳՐՈԶՆԻ

## Կարմիր խաչն օգնում է Չեչնիայի հակամարտության զոհերին

ՄՈԶԴՈԿ, 9 ՅՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեն զգալի օգնություն է ցույց տալիս Չեչնիայի հակամարտությունից տուժածներին: Այս տարվա առաջին օրերին Գրոզնիից 20 կմ հեռու գտնվող հիվանդանոց է բերվել 800 կգ դեղորայք: Գաղթականների գործերի կոմիտեին են հանձնվել 1600 մարդու համար նախատեսված պարենային ծանրոցներ:

Ինչպես հայտնի դարձավ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պաշտոնական հաղորդագրությունից, այդ կազմակերպությունը մոտ ժամանակ ներս Չեչնիայում կիրառել էին ... [illegible] կանացի օգնության խոշոր ծրագիր, որի շրջանակներում կբաշխվի 100 հազար ծանրոց:

ԴԱՏԱՐԱՆ

## Քրեական փոխարեն բժշկական ախտորոշում

ԱՊԱՐԱՆ, 9 ՅՈՒՆՎԱՐ, ՓԱՍՏ. Յունվարի 3-ի վաղ առավոտյան դաժան սպանություն է ներարկվել Ապարանի պայմանագրային զորքի են բատրա Սամվել Մարտիրոսյանը: Տուժողը գլխի ծանր վերքերով պառկած է տանը եւ չի կարողանում խոսել: Դատարանների դատական համաձայն, չորս անհայտ անձինք ներխուժել են զորքի շտաբ, որը գտնվում է քաղաքի կենտրոնում, եւ ատրճանակն ուղղելով նրա վրա՝ ստիպել են գլուխն անընդհատ խփել պատին: Կորցնելով գիտակցությունը՝ Մարտիրոսյանը ընկել է էլեկտրական սալիկի վրա: Ուշքի է եկել ուժեղ ցավից եւ հասկացել, որ այրվում է: Մի կերպ նա հասել է տան մոտի ավտոտնակներին եւ վայր ընկել: Նրան գտել եւ տուն է բերել հարեւաններից մեկը: Սամվել Մարտիրոսյանը ժամանակավոր գիտակցության գալով եղելությունը պատմել է հարազատներին:

Կատարվածի մասին Ապարանում տարբեր լուրեր են պտտվում: Քանզի տեղական իշխանության ներկայացուցիչները դեպքի վայրում չէին, «Փաստի» թղթակիցը չկարողացավ իմանալ նրանց պաշտոնական տեսակետը: Միայն զորքի հրամանատարներից մեկն ասաց, թե Ս. Մարտիրոսյանին այդ ամենը թվացել է, քանի որ նա կորցրել է հոգեկան հավասարակշռությունը: Տուժածի ծանոթներից ոչ ոք, այդ թվում կինն ու ընտանիքի անդամները չհաստատեցին այս «ախտորոշումը»: Մեզ հայտնի դարձավ, որ Ապարանի կամավորների ջոկատում ընդգրկված լինելու ժամանակ Ս. Մարտիրոսյանը եղել է Դ. Յ. դաշնակցության անդամ, այնուհետեւ դուրս է եկել կուսակցության շարքերից: Քննչական մարմիններից ոչ մեկը դեպքի վայրում այդպես էլ չհայտնվեց: Կամ օրն էր կիրակի, կամ ինչ որ մեկին ձեռնտու էր Ապարանային հոգեկան հիվանդ հայտարարել:


Ընկերությունը սկսում է 1995 թ.-ը համալիր առեւտրա-տնտեսական նոր ծրագրերով:

ԿՈԲՐԱ

Ընկերությունը շարունակում է վառելիքի մշտական մատակարարումը, ապրանքների վճարումը կանխիկ եւ փոխանցումային կարգով, ունենալով իր պահեստներում՝

■ նավթ ■ սոլյարկա ■ բենզին ■
■ մազութ ■ յուղի տարբեր տեսակներ ■

Ընկերությունն ունի ծառայությունների համակարգ.
■ Վառելիքը մատակարարում է սեփական փոխադրամիջոցներով Երեւանից 50-70 կմ շառավղով:
■ Անվճար գովազդում է Ձեր ապրանքները: Տնտեսական ծրագրերում միասնականորեն կիրառվում են ֆինանսական եւ իրավաբանական մոդելները:

Ընկերությունը պատրաստ է կատարել նավթամթերքների խոշոր գնումներ, որի առաջարկներով Դուք կարող եք այցելել Բաղրամյան 30, «Կոբրա» ՍՊԸ:
Հեռախոսներ՝ 22.81.86, 22.32.79, 22.02.74:



ԱՐՄԻՆԴ ԿԵՆՏՐՈՆԸ

Հրավիրում է

ինզօրյա ճանապարհորդության դեպի Հնդկաստանի մայրաքաղաք

ԵՐԵՎԱՆ - ԴԵԼԻ - ԵՐԵՎԱՆ

չվերթը կկայանա հունվարի 28-ին

(ուղեւորության ընթացքում ինքնաթիռը մնում է Դելիում)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է
ԵՐԵՎԱՆ - ՍԻՆԳԱՊՈՒՐ - ԵՐԵՎԱՆ
նոր չվերթ

«Էրեբունի» հյուրանոց, I մասնաշենք, 301-307 ս.

Հեռ. 52-75-65, 56-13-92, 56-05-79


## Ս. Ծննդյան պատարագ եւ խաղ Մայր տաճարում

[illegible]



Հոգեւոր Գերագույն խորհրդի անդամներ Գրիգոր Խաչկյանը, Պիոն Հակոբյանն ու Հակոբ Փոփոլայանը ստեղծյալ մասն ընդունելիս

[illegible]

«Ազգ»-ի խմբագրության հասցեն. Երեւան 23, Արշակունյաց 2 · Գրանցման թիվ 65 · Պատվեր 69149 · Պատվեր 1950 · Տպաքանակը 5000 · Ստորագրված տպագրության 9. 01. 1995 · Գինը 25 դրամ

digitised by A.R.A.R.@